

ՓԱՍՏԱԲԱՆԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ ԵՎ ՎԿԱՅԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

ԿԱՐԳ

(նոր խմբագրությամբ)

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) կողմից հավակնորդների փաստաբանական գործունեության արտոնագիր (**այսուհետ՝ արտոնագիր**) և փաստաբանի վկայական (**այսուհետ՝ վկայական**) տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Արտոնագիրը և վկայականը տրամադրվում է Պալատի անդամ դառնալու և արտոնագիր ստանալու մասին դիմումի (**այսուհետ՝ արտոնագիր ստանալու դիմում**) և Պալատի խորհրդի որոշման հիման վրա՝ օրենքով սահմանված կարգով երդում տալուց հետո:

3. Արտոնագրի և վկայականի տպագրությունը նախապես կազմակերպում է Պալատի աշխատակազմի ղեկավարը:

4. Արտոնագիրն ունի հերթական համար, որը հետագայում չի կարող փոփոխվել:

5. Արտոնագրի հերթական համարը տրամադրվում է արտոնագիր ստանալու դիմումի մուտքագրման ժամանակագրական կարգով, բացառությամբ սույն կարգի 6-րդ և 7-րդ կետերում նշված դեպքերի: Դիմելու պահին ազատ հերթական համարը տրամադրվում է տվյալ հավակնորդին:

6. Եթե նույն օրվա ընթացքում երկու կամ ավելի արտոնագիր ստանալու դիմումներ են ներկայացվել, ապա արտոնագրերի հերթական համարները տրամադրվում են այբբենական կարգով՝ հավակնորդների ազգանվան հերթականությամբ:

7. Եթե որակավորման քննությունները հանձնած հավակնորդների համար հայտարարվել է արտոնագրերի հանձնման հանդիսավոր միջոցառման օրը և արտոնագիր ստանալու դիմումներ ընդունելու ժամանակահատվածը, ապա արտոնագրերի հերթական համարները կարող են տրամադրվել այբբենական կարգով՝ հայտարարված ժամանակահատվածում դիմումներ ներկայացրած հավակնորդների ազգանվան հերթականությամբ:

8. Արտոնագիրը տպագրվում է A5 ձևաչափի անթափանց թղթի վրա՝ 148 մմ լայնությամբ և 210 մմ երկարությամբ:

9. Արտոնագիրը պարունակում է հետևյալ տեղեկությունները

- Պալատի խորհրդանիշը,
- Պալատի լրիվ անվանումը
- փաստաբանական գործունեության արտոնագրի հերթական համարը,
- փաստաբանի անունը և ազգանունը: Փաստաբանների անվան և

ազգանվան համընկնման դեպքում՝ արտոնագրի մեջ նշվում է նաև փաստաբանի հայրանունը:

- տրման ժամանակահատվածը,
- տրման ամսաթիվը,
- Պալատի նախագահի ստորագրությունը,
- Պալատի կնիքը:

10. Արտոնագրի մեջ սույն կարգի 9-րդ կետում նշված տեղեկությունները գրառվում են երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն:

11. Վկայականը պատրաստվում է կաշենման պատյանից՝ 65 մմ լայնությամբ և 196 մմ երկարությամբ (բացված վիճակում):

12. Վկայականի դիմերեսի վրա պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը և գրառված է Պալատի լրիվ անվանումը:

13. Վկայականի դարձերեսի վրա մեջտեղի մասում պատկերված է Պալատի խորհրդանշանը, իսկ դրա վերին և ստորին մասերում նշվում է Պալատի կրճատ անվանումը՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով:

14. Փաստաբանի վկայականն ունի երկու կողմ (աջ և ձախ):

15. Վկայականի ձախ կողմում փակցվում է փաստաբանի 30 մմ x 40 մմ չափի գունավոր լուսանկարը: Լուսանկարից աջ մասում նշվում են՝ Պալատի կրճատ անվանումը, վկայականի համարը, փաստաբանի անունը և ազգանունը, տրման ժամկետը, նախագահի անունը, ազգանունը և ստորագրությունը:

16. Վկայականի աջ մասում նշվում են փաստաբանի վերաբերյալ տեղեկություններ ռուսերեն և անգլերեն լեզուներով:

17. Վկայականի աջ մասի մեջտեղում արտացոլվում է Պալատի խորհրդանշանը:

18. Վկայականի աջ և ձախ կողմերը կնքվում են Պալատի կնիքով: Վկայականի ձախ մասում կնիքը դրվում է այնպես, որ կիսով չափ ընդգրկի նաև լուսանկարը:

19. Արտոնագրի կամ վկայականի կորստի կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքում փաստաբանի գրավոր դիմումի հիման վրա Պալատը տրամադրում է արտոնագրի կամ վկայականի կրկնօրինակ: Դիմումին կից ներկայացվում է օգտագործման համար ոչ պիտանի դարձած արտոնագիրը կամ վկայականը: Կորած կամ օգտագործման համար ոչ պիտանի դարձած արտոնագրի և/կամ վկայականի փոխարեն տրվում են նոր արտոնագիր և/կամ նոր վկայական՝ «Կրկնօրինակ» նշումով:

20. Առաջին անգամ արտոնագիր և վկայական տրամադրելու դեպքում փաստաբանից լրացուցիչ վճար չի գանձվում:

21. Արտոնագրի և վկայականի կրկնօրինակի տրամադրման համար փաստաբանից գանձվում է վճար՝ վկայականի արժեքի չափով:

22. Պալատի նախագահի որոշմամբ կարող է սահմանվել արտոնագրին և վկայականին փոխարինող պլաստիկ քարտի (**այսուհետ՝ պլաստիկ քարտ**) ձևը և բովանդակությունը: Պլաստիկ քարտը փաստաբանին կարող է տրամադրվել կամավորության սկզբունքով: Փաստաբանի ցանկության դեպքում, պլաստիկ քարտ ստանալու դեպքում, փաստաբանը կարող է իր մոտ պահել նաև վկայականը և արտոնագիրը:»: